

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 18.12.2020թ. նիստի

Գիտական խորհրդի արտահերթ նիստը կայացավ հեռահար կապի միջոցով:
Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 37 (երեսունյոթ)
անդամներին:

Գիտական խորհրդի թվով 18 անդամների առաջարկով գիտխորհրդի արտահերթ նիստը, որը կայանալու էր ս.թ. դեկտեմբերի 11-ին ժամը 15.00-ին՝ քվորումի բացակայության պատճառով հետաձգվեց՝ համաձայն ՇՊՀ գիտխորհրդի կանոնակարգի 4.6 կետի:

Առաջնորդվելով ՇՊՀ գիտխորհրդի կանոնակարգի 4.7 կետով՝ հրավիրվում է ՇՊՀ գիտխորհրդի արտահերթ նիստ՝ նախաձեռնող խմբի կողմից առաջարկվող նույն օրակարգով.

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում ստեղծված իրավիճակի վերլուծություն:
2. Նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված խայտառակ հայտարարության նկատմամբ կոշտ դիրքորոշման ամրագրում հայ ժողովրդի արժանապատվության նվաստացման, պետականության վտանգման, Արցախի Հանրապետության տարածքային կորուստների, ինքնիշխանության լրջագույն սահմանափակումների, հայկական զույգ պետություններում և Սփյուռքում ձևավորված բարոյահոգեբանական բարդ ու ծանր մթնոլորտի համատեքստում:
3. Հասարակությանն ու իշխանություններին ուղղված կոչ-հայտարարության ձևակերպում և հրապարակում՝ ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարության հետագա պաշտոնավարման անարդյունավետության և վարչապետի գլխավորությամբ կառավարության հրաժարականի մասին:
4. Առողջ համագործակցության քարտեզագրում հասարակության բոլոր շերտերի պրոֆեսիոնալ և կարող ուժերի, պետական կառույցների հետ՝ հանուն գերակա շահի՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների:

Հեռահար կապի միջոցով գիտական խորհրդի նիստին մասնակցելու համար հարթակին միացել էին 22 անդամներ:

Պարոն Սերոբյանն առաջնորդվելով ՇՊՀ Գիտական խորհրդի կանոնակարգի 4.6-րդ կետով, առաջարկեց 30 րոպե սպասել քվորում ապահովելու համար, սակայն այդ ընթացքում գիտական խորհրդի անդամներից չմիացան հարթակին: Քվորում չլինելու պատճառով նիստը չկայացավ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի
քարտուղար

Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ